

գուր, սիրուն ձեռք մը երկար մատներով: Այն քարը որուն վրայ նստած էր Յիսուս Պիղատոսի Պալատին մէջ, շատ հրաշքներ կը գործէր. Անոր ստքի հետքերուն չափով կապեր այրերը կը կրէին իրենց մարմնոյն վրայ զանազան հիւանդութեանց համար, որոնցմէ կը բուժուէին: Քարն ալ զարդարուած էր ոսկիով և արծաթով (P. T. S. հատ. Բ. էջ 20):

Քրիստոսի ժամանակակից ու Անոր հրաշքներուն ականատես Léntulus ի (հաւանաբար համանուն հռովմայեցի ընտանիքէն սերած) կողմէ տրուած Յիսուսի մարմնաւոր կերպարանքին վրայ կան հետեւեալ տեղեկութիւնները, որ հաւաքուած են անվաւեր գրուածքէ մը (*). «Մեր ժամանակին երեցաւ մարդ մը՝ վայելչահասակ, գեղեցիկ և պատկառելի, որուն ով որ կը նայէր թէ՛ կը սիրէր և թէ՛ կը վախնար: Անոր մազերն էին փայլուն և գանգուր, երբեմն ալ գինեգոյն: Ուսերէն վար կը կախուէին մազերը, նազովրեցիներուն նման մէջտեղէն երկուքի բաժնուելով: Ճակատը լայն էր եւ պայծառագոյն, երեսները խորշոմ չունէին, այլ քաղցր գոյնով մը կարմրագոյն էին: Քիթն ու բերանը անթերի ձեւ մը ունէին: Ո՛րքուքը առատ էր և ոչ երկայն, այլ սրածայր և մազերուն նկատմամբ դեղնագոյն: Աչքերը յառաջակարկառ եւ փայլուն և կը փոխէին իրենց երևոյթը: Արտասանութեան ժամանակ Ան պատկառելի էր, խաղաղ եւ խանդակաթ, բարկութեան ժամանակ՝ զուարթ եւ զօրաւոր արժանիքով մը: Անոր խնդալը երբեք տեսնուած չէ,

(*) Նոյն կր զտուի նաեւ նոր Կսակարանաց «Անկանոն գիրք» կոչուած անվաւերականերուն մէջ, հետեւեալ խոսքով. «**Ռուրք Անհուրեայ Պորթիոսի զՅիսուսէ Նազովրեցոյն**», որ նոր բարգմանութիւն մըն է (Թան. Բ. էջ ԺԲ. 381-382):